



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 հունիսի 2019թ.

N 7 - Ա

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ  
2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 19-ի «Արցախի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների անցկացման մասին» N 468-Ն որոշմանը համապատասխան՝ Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է**.

1. Ի գիտություն ընդունել, որ 2019 թվականի սեպտեմբերի 8-ին տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններ են անցկացվելու Արցախի Հանրապետության 228 (երկու հարյուր քսանութ) համայնքներում (համայնքների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի):

2. Հաստատել Արցախի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների 2019 թվականի սեպտեմբերի 8-ի հերթական ընտրությունների՝

1) նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի.

2) նախապատրաստման և անցկացման հետ կապված ընտրական հանձնաժողովների ծախսերի նախահաշիվները՝ 77958520 (յոթանասունյոթ միլիոն ինը հարյուր հիսունութ հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամի չափով ընդհանուր գումարով՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Հանձնարարել՝

1) Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներին և աշխատակազմին, տարածքային ընտրական հանձնաժողովներին՝

ապահովել սույն որոշման 2-րդ կետում նշված ժամանակացույցով նախատեսված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը՝ ընտրությունները պատշաճ մակարդակով անցկացնելու համար.

2) Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար Ս.Մելքունյանին՝ ապահովել սույն որոշման՝

ա. հանրային իրազեկման և շահագրգիռ պետական մարմիններին ու պատասխանատու կատարողներին առաքման աշխատանքները.

բ. կատարման վերահսկողությունը:

4. Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի գլխավոր հաշվապահին՝ տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների անցկացման համար նախատեսված ծախսերն իրականացնել Արցախի Հանրապետության 2019թ. պետական բյուջեով ընտրությունների անցկացման համար նախատեսված միջոցներից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ**

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ**

**Ե.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ**

**Ց Ա Ն Կ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ,  
ՈՐՈՆՅՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՂՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼՈՒ ԵՆ  
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հ/Հ	Համայնքներն ըստ շրջանների	Ընտրվող մարմինը	
		Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
1.	<b>Ստեփանակերտ</b>	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
<b>Ասկերանի շրջան</b>			
1.	Ասկերան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
2.	Ակնաղբյուր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
3.	Այգեստան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
4.	Աստղաշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
5.	Ավետարանոց	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
6.	Արմենակավան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
7.	Բերքաձոր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
8.	Դահրավ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
9.	Դաշուշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
10.	Իվանյան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
11.	Լուսաձոր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
12.	Խանցք	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
13.	Խաչեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
14.	Խաչմաչ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
15.	Խնածախ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
16.	Խնապատ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
17.	Խնձրիստան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
18.	Խրամորթ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
19.	Ծաղկաշատ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
20.	Կարմիր գյուղ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
21.	Հարավ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
22.	Հիլիս	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
23.	Հովսեփավան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
24.	Մաղաթաշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
25.	Մխիթարաշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի

26.	Մոշխմհատ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
27.	Նախիջևանիկ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
28.	Ներքին Սզնեք	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
29.	Նորագյուղ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
30.	Շոշ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
31.	Պատարա	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
32.	Զրադացներ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
33.	Ռև	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
34.	Սառնաղբյուր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
35.	Սարդարաշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
36.	Սարուշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
37.	Սղնախ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
38.	Վարդաձոր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
39.	Վերին Սզնեք	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
40.	Ուղտասար	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
41.	Փառուխ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
42.	Քոսսնի	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
<b>Հաղրութի շրջան</b>			
1.	Հաղրութ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
2.	Ազոխ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
3.	Ակնաղբյուր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
4.	Այգեստան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
5.	Առաջամուղ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
6.	Առաքել	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
7.	Արևշատ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
8.	Բանաձոր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
9.	Դրախտիկ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
10.	Թաղասեռ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
11.	Թաղուտ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
12.	Խանձաձոր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
13.	Խծաբերդ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
14.	Ծակուռի	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
15.	Ծամձոր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
16.	Կարմրակուճ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
17.	Հակակու	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
18.	Հարթաշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
19.	Հին Թաղեր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
20.	Մարիամաձոր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի

21.	Մեծ Թաղեր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
22.	Մոխրենես	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
23.	Նորաշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
24.	Պլեթանց	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
25.	Զրակուս	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
26.	Վարդաշատ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
27.	Տող	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
28.	Տումի	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
29.	Ուխտաձոր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
30.	Քյուրաթաղ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
<b>Մարտակերտի շրջան</b>			
1.	Մարտակերտ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
2.	Աղաբեկլանջ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
3.	Առաջաձոր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
4.	Գառնաքար	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
5.	Գետավան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
6.	Դրմբոն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
7.	Զազլիկ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
8.	Զարդախաչ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
9.	Թալիշ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
10.	Թբլղու	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
11.	Խնկավան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
12.	Ծաղկաշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
13.	Ծմակահող	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
14.	Կիչան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
15.	Կոճողոտ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
16.	Կուսապատ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
17.	Հաթերք	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
18.	Հարությունագոմեր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
19.	Հովտաշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
20.	Ճանկաթաղ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
21.	Մաղավուզ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
22.	Մատաղիս	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
23.	Մեծ շեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
24.	Մեհմանա	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
25.	Մոխրաթաղ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
26.	Ներքին Հոռաթաղ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
27.	Նոր Այգեստան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի

28.	Նոր Կարմիրավան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
29.	Նոր Հայկաջուր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
30.	Նոր Ղազանչի	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
31.	Նոր Մարաղա	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
32.	Նոր Սեյսուլան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
33.	Շահմասուր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
34.	Չափար	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
35.	Չլդրան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
36.	Պողոսագոմեր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
37.	Վաղուհաս	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
38.	Վանք	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
39.	Վարդաձոր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
40.	Վարնկաթաղ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
41.	Վերին Հոռաթաղ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
42.	Տոնաշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
43.	Քոլատակ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
<b>Մարտունու շրջան</b>			
1.	Մարտունի	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
2.	Ճարտար	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
3.	Աշան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
4.	Ավդուռ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
5.	Բերդաշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
6.	Գիշի	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
7.	Եմիշճան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
8.	Զարդանաշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
9.	Թաղավարդ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
10.	Խերխան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
11.	Խնուշինակ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
12.	Ծովատեղ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
13.	Կաղարծի	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
14.	Կավահան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
15.	Կարմիր Շուկա	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
16.	Կոլխոզաշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
17.	Հաղորտի	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
18.	Հացի	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
19.	Հերիեր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
20.	Մաճկալաշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
21.	Մյուրիշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի

22.	Մամնա	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
23.	Մուշկապատ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
24.	Ննգի	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
25.	Նորշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
26.	Շեխեր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
27.	Պառավաթումբ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
28.	Ջիվանի	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
29.	Սարգսաշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
30.	Սոս	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
31.	Սպիտակաշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
32.	Վազգենաշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
33.	Վարանդա	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
34.	Քարահունջ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
35.	Քերթ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
<b>Շահումյանի շրջան</b>			
1.	Քարվաճառ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
2.	Ակնաբերդ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
3.	Դաղիվանք	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
4.	Եղեգնուտ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
5.	Զուար	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
6.	Ծար	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
7.	Հավսաթաղ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
8.	Նոր Բրաջուր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
9.	Նոր Գետաշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
10.	Նոր Էրքեջ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
11.	Նոր Խարխափուտ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
12.	Նոր Կարաչինար	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
13.	Նոր Մանաշիդ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
14.	Նոր Վերինշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
15.	Չարեքտար	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
16.	Քնարավան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
<b>Շուշիի շրջան</b>			
1.	Շուշի	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
2.	Եղցահող	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
3.	Լիսագոր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
4.	Հին շեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
5.	Մեծ շեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
6.	Քարին տակ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի

7.	Քիրսավան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
<b>Քաշաթաղի շրջան</b>			
1.	Բերձոր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
2.	Կովսական	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
3.	Միջնավան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
4.	Որոտան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
5.	Ալաշկերտ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
6.	Աղաձոր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
7.	Աղանուս	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
8.	Աղավնատուն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
9.	Աղավնո	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
10.	Այգեկ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
11.	Այգեհովիտ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
12.	Արախիշ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
13.	Արծվաշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
14.	Արտաշավի	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
15.	Գանձա	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
16.	Գետամեջ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
17.	Գետափ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
18.	Գողթանիկ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
19.	Դրախտաձոր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
20.	Երիցվանք	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
21.	Իշխանաձոր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
22.	Լեռնահովիտ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
23.	Ծաղկաբերդ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
24.	Ծիծեռնավանք	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
25.	Ծոբաձոր	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
26.	Կերեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
27.	Կումայրի	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
28.	Հակ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
29.	Հակարի	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
30.	Հայկազյան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
31.	Հոջանց	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
32.	Ձորափ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
33.	Ղազարապատ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
34.	Մամարք	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
35.	Մարտունաշեն	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
36.	Միրիկ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի



37.	Մշենի	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
38.	Մոշաթաղ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
39.	Մուշ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
40.	Ներքին Սուս	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
41.	Նորաշենիկ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
42.	Շալուա	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
43.	Սարատակ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
44.	Սոնասար	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
45.	Վակունիս	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
46.	Վաղազին	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
47.	Վան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
48.	Վարդաբաց	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
49.	Վուրգավան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
50.	Տիգրանավան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
51.	Ուռեկան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
52.	Փակահան	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
53.	Քաշունիք	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
54.	Քարեգահ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ս.ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

**ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ  
2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ  
ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ**

Հ/Հ	Ընտրական հանձնաժողովների անվանումը	Ծախսերը (հազ. դրամ)
1	Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով (հավելված N 3/1)	13 528,02
2	Արցախի Հանրապետության Ստեփանակերտի տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N 3/2)	8 597,25
3	Արցախի Հանրապետության Ասկերանի տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N3/3)	9 266,2
4	Արցախի Հանրապետության Հաղրութի տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N3/4)	7 634,9
5	Արցախի Հանրապետության Մարտակերտի տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N3/5)	10 116,9
6	Արցախի Հանրապետության Մարտունու տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N3/6)	8 601,9
7	Արցախի Հանրապետության Շահումյանի տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N3/7)	4 142,0
8	Արցախի Հանրապետության Շուշիի տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N3/8)	2 620,55
9	Արցախի Հանրապետության Քաշաթաղի տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N3/9)	13 450,8
	<b>ԸՆԴԱՄԵՆ՝</b>	<b>77 958,52</b>

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Ս.ՄԵԼՔՈՒՄՅԱՆ**

**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

**Արցախի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների 2019 թվականի սեպտեմբերի 8-ի  
հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների**

N	Միջոցառման բովանդակությունը	Իրավական հիմքը (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրք)	Կատարման ժամկետը (ներառյալ)՝ <b>2019թ.</b>	Կատարող(ներ)ը
1	Դիտորդների հավատարմագրում իրականացվում կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարվում է. <b>ընտրությունը նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան տասն օր առաջ</b>	Հոդված 30, մաս 2	Հունիսի 20-ից մինչև օգոստոսի 29-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
2	Դիտորդներին տրվող վկայականներն այդ կազմակերպություններին հանձնվում են. <b>դիմումն ստանալուց ոչ ուշ, քան յոթ օր հետո</b>	Հոդված 30, մաս 3	Հունիսի 27-ից մինչև սեպտեմբերի 5-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
3	Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների, վստահված անձանց և դիտորդների համար ուսումնական ձեռնարկներ կարող են հրապարակվել. <b>ընտրությունների անցկացման ժամանակահատվածում</b>	Հոդված 48	Հուլիս-օգոստոս	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
4	Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների՝ վերջին մեկ տարում տվյալ համայնքում հաշվառված լինելու մասին տեղեկանքը տրամադրվում է դիմելուց հետո. <b>եռօրյա ժամկետում, բայց ոչ շուտ, քան մինչև ընտրությունների նշանակումը</b>	Հոդված 131, մաս 4	Հունիսի 20-ից սկսած	Ոստիկանություն
5	Ընտրական շտաբները կարող են կազմավորվել. <b>ընտրություն նշանակվելուց հետո</b>	Հոդված 18, մաս 5	Հունիսի 20-ից	Թեկնածուներ
6	Համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին որոշում ընդունվում է. <b>ընտրությունները նշանակվելուց հետո՝ 21-օրյա ժամկետում</b>	Հոդված 20, մաս 3	Մինչև հուլիսի 10-ը	Համայնքի ղեկավար

7	Ընտրական տեղամասերը կազմավորվում են. <b>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ</b>	Հոդված 14, մաս 1	Մինչև հուլիսի 25-ը	Ոստիկանություն՝ համայնքի ղեկավարի, տարածքային ընտրական հանձնաժողովի անդամի մասնակցությամբ
8	Տեղամասային կենտրոնները սահմանվում են. <b>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ</b>	Հոդված 16, մաս 1	Մինչև հուլիսի 27-ը	Համայնքի ղեկավար
9	Տեղամասային կենտրոնի սահմանման մասին ոստիկանությունը, տարածքային ընտրական հանձնաժողովը և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողը տեղեկացվում են. <b>կենտրոնը սահմանելուց անմիջապես հետո՝ անհապաղ</b>	Հոդված 16, մաս 1	Հուլիսի 27-ից ոչ ուշ	Համայնքի ղեկավար
10	Ընտրական տեղամասերի հերթական համարները սահմանվում և այդ տվյալները կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. <b>երկօրյա ժամկետում</b>	Հոդված 49, մաս 1, կետ 2	Մինչև հուլիսի 29-ը	Տարածքային ընտրական հանձնաժողով
11	Ընտրողների ցուցակների մեկ օրինակը (վերջին էջում ներառվող ընտրողների ցուցակներում անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, տեղի, դրանց քննարկման կարգի, ժամանակի և պայմանների մասին տեղեկանքով) տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին տրամադրվում և տեղամասային կենտրոնում փակցվում է. <b>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ</b>	Հոդված 10, մաս 1, Հոդված 11, մաս 3, Հոդված 6, մաս 8	Մինչև հուլիս 30-ը	Ոստիկանություն, տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող
12	Ընտրողների ցուցակները՝ էլեկտրոնային կրիչով կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում են. <b>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ և 2 օր առաջ</b>	Հոդված 10, մաս 4	Մինչև հուլիսի 30-ը և սեպտեմբերի 6-ին	Ոստիկանություն
13	Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են. <b>քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 35 և ոչ ուշ, քան 30 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն</b>	Հոդված 143, մաս 3	Օգոստոսի 4-ից մինչև օգոստոսի 9-ի ժամը 18.00-ն	Թեկնածու կամ թեկնածուի լիազոր ներկայացուցիչ
14	Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների գրանցումը կատարվում է. <b>քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30 և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն</b>	Հոդված 143, մաս 4	Օգոստոսի 9-ից մինչև օգոստոսի 14-ի ժամը 18.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
15	Տեղամասային ընտրական հանձնաժողովներ կազմավորելու համար հայտերը հանձնաժողովի նախագահին են ներկայացվում. <b>քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30 և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն</b>	Հոդված 42, մաս 2	Օգոստոսի 9-ից մինչև օգոստոսի 14-ի ժամը 18.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողովի անդամներ

16	Տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին նիստը կայանում է. <b>հանձնաժողովի կազմավորումից հետո՝ երկօրյա ժամկետում</b>	Հոդված 42, մաս 5	Օգոստոսի 11-ից մինչև օգոստոսի 16-ը	Տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ, տեղամասային ընտրական հանձնաժողովի տարիքով ավագ անդամ
17	Ընտրությունների հետ կապված միջոցառումներ կազմակերպելու նպատակով անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճներ և այլ շինություններ օգտագործելու համար դահլիճը տնօրինող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարին դիմում է ներկայացվում. <b>միջոցառման կազմակերպման օրվանից առնվազն հինգ օր առաջ</b>	Հոդված 18, մաս 2, ԼՂՀ ԿԸՀ որոշում N 16-Ն առ 28.01.2015թ.	Միջոցառումից առնվազն 5 օր առաջ	Թեկնածուներ կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ
18	Նախընտրական քարոզչություն իրականացնելու համար համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուն նախընտրական հիմնադրամ բացում է. <b>գրանցվելուց հետո</b>	Հոդված 25, մաս 1, Հոդված 138, մաս 1	Օգոստոսի 9-ից սկսած՝ կախված գրանցվելու կոնկրետ օրվանից	Թեկնածուներ
19	Թեկնածուին կամ նրա լիազոր ներկայացուցչին կազմավորված ընտրական տեղամասերի թվի եռապատիկից ոչ ավելի թվով վստահված անձանց վկայականներ տրվում է. <b>թեկնածուներին գրանցելուց հետո՝ հնգօրյա ժամկետում</b>	Հոդված 32, մաս 2	Օգոստոսի 9-ից սկսած՝ կախված գրանցվելու կոնկրետ օրվանից	Գրանցում իրականացրած տարածքային ընտրական հանձնաժողով
20	Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է . <b>թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ</b>	Հոդված 18, մաս 1	Օգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 6-ը	Նախընտրական քարոզչություն իրականացնողներ
21	Օրենսդրությամբ սահմանված դրույթների խախտմամբ փակցված քարոզչական պաստառները վերացվում են. <b>անհապաղ</b>	Հոդված 20, մաս 8	Օգոստոսի 15-ից սկսած՝ հայտնաբերման պահից	Համայնքի ղեկավար, անհրաժեշտության դեպքում՝ նուստիկանության աջակցությամբ
22	Գույքի և եկամուտների մասին հայտարարագիրը համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում է. <b>թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հինգ օրվա ընթացքում</b>	Հոդված 6, մաս 5	Օգոստոսի 15-ից մինչև օգոստոսի 19-ը	Թեկնածուներ, լիազոր ներկայացուցիչներ
23	Թեկնածուների գույքի և եկամուտների հայտարարագրերի պատճենները ընտրական հանձնաժողովների անդամներին, վստահված անձանց, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին, դիտորդներին տրամադրվում են. <b>գրավոր դիմումի հիման վրա</b>	Հոդված 6, մաս 6	Մկսած օգոստոսի 15-ից	Տարածքային ընտրական հանձնաժողով

24	Նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը՝ ծախսերի կատարումը հաստատող փաստաթղթերով, իրենց գրանցած ընտրական հանձնաժողովներին ներկայացվում են . <b>նախընտրական քարոզչությունն սկսելուց հետո՝ տասներորդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար՝ սահմանված ժամկետից ոչ ուշ, քան երեք օր առաջ</b>	Հոդված 27, մաս 1	Օգոստոսի 24-ին, սեպտեմբերի 10-ին	Թեկնածուներ
25	Իրենց թեկնածությունը հանելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեն. <b>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան տասն օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն</b>	Հոդված 137, մաս 2	Մինչև օգոստոսի 29-ի ժամը 18.00-ն	Թեկնածուներ
26	Ընտրողների թվի վերաբերյալ (ըստ ընտրատարածքների և ընտրական տեղամասերի) տարածքային ընտրական հանձնաժողովին տեղեկանք տրամադրվում է. <b>քվեարկության օրվանից տասն օր և երեք օր առաջ</b>	Հոդված 10, մաս 2	Օգոստոսի 29-ին և սեպտեմբերի 5-ին	Ոստիկանություն
27	Քվեարկության օրվանից տասն օր առաջ ընտրողների թվի վերաբերյալ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա քվեաթերթիկները տպագրվում են. <b>քվեարկության օրվանից ոչ շուտ, քան տասը, և ոչ ուշ, քան երեք օր առաջ</b>	Հոդված 56, մաս 5.6	Օգոստոսի 29-ից մինչև սեպտեմբերի 5-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
28	Թեկնածուների վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքների հրապարակումն արգելվում է. <b>քվեարկության օրվան նախորդող յոթ օրվա ընթացքում, ներառյալ քվեարկության օրը՝ մինչև ժամը 20.00-ն</b>	Հոդված 21, մաս 3	Սեպտեմբերի 2-ից մինչև սեպտեմբերի 8-ի ժամը 20.00-ն	Սոցիալական և իրականացնող կազմակերպություններ, պատվիրատուներ
29	Ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում ոստիկանություն ներկայացվում է. <b>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան հինգ օր առաջ</b>	Հոդված 12, մաս 1	Մինչև սեպտեմբերի 3-ը	Յուրաքանչյուր ոք
30	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները տարածքային ընտրական հանձնաժողովներին հանձնվում են. <b>քվեարկության օրվանից ոչ շուտ, քան հինգ և ոչ ուշ, քան երեք օր առաջ</b>	Հոդված 57, մաս 3	Սեպտեմբերի 3-ից մինչև սեպտեմբերի 5-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
31	Ընտրական օրենսգրքով սահմանված բավարար հիմքերի առկայության դեպքում ընտրողների ցուցակում անհրաժեշտ փոփոխություններ կամ ուղղումներ կատարվում են և այդ մասին դիմողը գրավոր տեղեկացվում է. <b>դիմումն ստանալուց հետո՝ հինգ օրվա ընթացքում, սակայն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան չորս օր առաջ</b>	Հոդված 12, մաս 1	Մինչև սեպտեմբերի 4-ը	Ոստիկանություն
32	Քվեարկության օրվա, ընտրական տեղամասի համարի, քվեարկության տեղի և ժամանակի մասին ընտրողներին ծանուցագրեր են ուղարկվում . <b>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան երեք օր առաջ</b>	Հոդված 11, մաս 6	Մինչև սեպտեմբերի 5-ը	Ոստիկանություն

33	Ոստիկանության կողմից կազմվող ընտրողների ցուցակներն (այդ թվում՝ լրացուցիչ ցուցակները)՝ ըստ ընտրական տեղամասերի և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները՝ տպագրված երկու օրինակից (ընտրողների ցուցակների, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների 1-ին օրինակը՝ կազմված մատյանի ձևով, 2-րդ օրինակը՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար), ինչպես նաև ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տրամադրվում են. <b>Քվեարկության օրվանից երկու օր առաջ</b>	Հոդված 10, մաս 3	Սեպտեմբերի 6-ին	Ոստիկանություն
34	Ընտրողների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է. <b>Քվեարկության օրվանից երկու օր առաջ</b>	Հոդված 11, մաս 4	Սեպտեմբերի 6-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ
35	Տեղամասային ընտրական հանձնաժողովներին քվեաթերթիկները և կնիքների փաթեթները հանձնվում են. <b>Քվեարկության նախորդ օրը</b>	Հոդված 56, մաս 7, Հոդված 57, մաս 4	Սեպտեմբերի 7-ին	Տարածքային ընտրական հանձնաժողով
36	Քվեարկության սենյակի կահավորումը պետք է ավարտվի. <b>Քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն</b>	Հոդված 54, մաս 3	Սեպտեմբերի 7-ին՝ մինչև ժամը 24.00-ն	Համայնքի ղեկավար, տարածքային ընտրական հանձնաժողով
37	Տեղամասային ընտրական հանձնաժողովին հանձնված բոլոր քվեաթերթիկները ստորագրվում են. <b>Քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն</b>	Հոդված 58, մաս 7	Սեպտեմբերի 7-ին՝ մինչև ժամը 24.00-ն	Վիճակահանությամբ որոշված տեղամասային ընտրական հանձնաժողովի 3 անդամներ
38	Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը սկսվում է. <b>Քվեարկության օրը՝ ժամը 7.00-ին</b>	Հոդված 61, մաս 1	Սեպտեմբերի 8-ին՝ ժամը 7.00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողով
39	Քվեարկության սկիզբը հայտարարվում և ընտրողների մուտքը քվեարկության սենյակ թույլատրվում է. <b>Քվեարկության օրը՝ ժամը 8.00-ին</b>	Հոդված 62, մաս 1	Սեպտեմբերի 8-ին՝ ժամը 8.00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ
40	Քվեարկության ավարտի մասին հայտարարվում և ընտրողների մուտքը քվեարկության սենյակ արգելվում է. <b>Քվեարկության օրը՝ ժամը 20.00-ին</b>	Հոդված 66, մաս 1	Սեպտեմբերի 8-ին՝ ժամը 20.00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ
41	Քվեարկության օրը մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը տարածքային ընտրական հանձնաժողով հաղորդվում են. <b>Քվեարկության օրը, համապատասխանաբար մինչև ժամը 11.30-ը, 14.30-ը, 17.30-ը և 20.30-ը</b>	Հոդված 6, մաս 9	Սեպտեմբերի 8-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողովներ

42	Քվեարկության օրը մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին նախորդ կետում նշված տվյալները ամփոփվում, հրապարակվում և հաղորդում են կենտրոնական ընտրական հանձնաժողովը. <b>նախորդ կետում նշված պարբերականությամբ</b>	Հոդված 6, մաս 9	Սեպտեմբերի 8-ին	Տարածքային ընտրական հանձնաժողովներ
43	Ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին ոստիկանության տեղեկանքի հիման վրա ընտրողների ցուցակում լրացում կատարվում է. <b>քվեարկության օրը` լրացուցիչ ցուցակ կազմելու միջոցով</b>	Հոդված 12, մաս 2	Սեպտեմբերի 8-ին` մինչև ժամը 20.00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողով
44	Արգելվում է հրապարակել ընտրողների հարցման արդյունքներն այն մասին, թե ում օգտին են քվեարկել. <b>քվեարկության օրը` մինչև ժամը 20.00-ն</b>	Հոդված 21, մաս 3	Սեպտեմբերի 8-ին` մինչև ժամը 20.00-ն	Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերություններ, հեռուստաընկերություններ
45	Նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կատարվող բոլոր գործառույթները դադարեցվում են. <b>քվեարկության օրվանից</b>	Հոդված 26, մաս 5	Սեպտեմբերի 8-ից	Թեկնածուներ, բանկեր
46	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության կազմումն ավարտվում և արձանագրությունը հրապարակվում է. <b>նիստի վերջում, բայց ոչ ուշ, քան քվեարկության ավարտից տասը ժամ հետո</b>	Հոդված 69, մաս 5	Մինչև սեպտեմբերի 9-ի ժամը 6.00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ
47	Ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթը, քվեարկության արդյունքների արձանագրության երկու օրինակը, գրանցամատյանը և հանձնաժողովի կնիքը տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են. <b>քվեարկության ավարտից հետո` ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում</b>	Հոդված 69, մաս 9	Մինչև սեպտեմբերի 9-ի ժամը 8.00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար
48	Տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալները` ըստ ընտրական տեղամասերի աղյուսակավորվում են. <b>պարբերաբար, բայց ոչ ուշ, քան երեք ժամը մեկ</b>	Հոդված 71, մաս 2	Մինչև սեպտեմբերի 9-ի ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
49	Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալների աղյուսակավորումն ավարտվում է. <b>քվեարկության ավարտից հետո` ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում</b>	Հոդված 71, մաս 2	Մինչև սեպտեմբերի 9-ի ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
50	Տարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորման օրինակը` վավերացված հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով, փակցվում է հանձնաժողովում` բոլորի համար տեսանելի տեղում. <b>անհապաղ</b>	Հոդված 71, մաս 3	Մինչև սեպտեմբերի 9-ի ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ



51	Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության նախնական արդյունքներն ամփոփվում և արձանագրությամբ վավերացվում են. <b>քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում</b>	Հոդված 72, մաս 1	Մինչև սեպտեմբերի 9-ի ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
52	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում կարող է ներկայացվել միայն տարածքային ընտրական հանձնաժողով. <b>քվեարկության հաջորդ օրը՝ մինչև ժամը 18.00-ն</b>	Հոդված 47, մաս 1	Մինչև սեպտեմբերի 9-ի ժամը 18.00-ն	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը ներկա գտնված թեկնածու, վստահված անձ, հատուկ կարծիք հայտնած տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ
53	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. <b>քվեարկության ավարտից հետո, ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթի հետ միաժամանակ</b>	Հոդված 57, մաս 5	Մինչև սեպտեմբերի 10-ի ժամը 20.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
54	Տարածքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվում է. <b>քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, իսկ բողոք լինելու դեպքում՝ քվեարկության օրվանից հետո՝ հինգերորդ օրը</b>	Հոդված 72, մաս 2	Մինչև սեպտեմբերի 10-ի ժամը 20.00-ն (բողոք լինելու դեպքում՝ սեպտեմբերի 13-ին)	Տարածքային ընտրական հանձնաժողով
55	Վերահաշվարկն իրականացվում է. <b>վերահաշվարկի դիմումների ընդունման ժամկետի հաջորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո՝ հինգերորդ օրը՝ ժամը 14.00-ն</b>	Հոդված 47, մաս 6	Սեպտեմբերի 10-ից մինչև սեպտեմբերի 13-ի ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
56	Ընտրողների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը տեղամասային կենտրոնում մնում են փակցված. <b>մինչև տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունների դադարման օրը</b>	Հոդված 11, մաս 4	Մինչև սեպտեմբերի 13-ը	Տեղամասային ընտրական հանձնաժողով
57	Տարածքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության արդյունքներն ամփոփվում և դրա վերաբերյալ որոշում ընդունվում է. <b>քվեարկության օրվանից հետո՝ հինգ օրվա ընթացքում</b>	Հոդված 72, մաս 8	Մինչև սեպտեմբերի 13-ը	Տարածքային ընտրական հանձնաժողով
58	Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների վերաբերյալ արձանագրության և որոշման օրինակները կենտրոնական ընտրական հանձնաժողով և շրջվարչակազմի ղեկավարին (Ստեփանակերտի քաղաքապետին) ներկայացվում են. <b>երկօրյա ժամկետում</b>	Հոդված 72, մաս 9, Հոդված 141, մաս 8	Մինչև սեպտեմբերի 15-ը	Տարածքային ընտրական հանձնաժողով

59	Ընտրական գրավի գումարը վերադարձվում է. <b>գրավոր դիմումի հիման վրա՝ մեկամսյա ժամկետում</b>	Հոդված 24, մաս 2	Սեպտեմբերի 13-ից հետո դիմելու դեպքում	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
60	Տեղամասային ընտրական հանձնաժողովը տարածքային ընտրական հանձնաժողովին, իսկ տարածքային ընտրական հանձնաժողովը կենտրոնական ընտրական հանձնաժողովին ֆինանսական միջոցների ծախսման վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնում է. <b>ընտրություններից հետո՝ համապատասխանաբար տասնօրյա ժամկետում և քսանօրյա ժամկետում</b>	Հոդված 23, մաս 4	Մինչև սեպտեմբերի 18-ը, մինչև սեպտեմբերի 28-ը	Տեղամասային ընտրական հանձնաժողով, տարածքային ընտրական հանձնաժողով
61	Ընտրություններից հետո նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները փոխանցվում են պետական բյուջե. <b>ընտրության արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ եռամսյա ժամկետը լրանալուց հետո</b>	Հոդված 26, մաս 7	Դեկտեմբերի 13-ից հետո	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

**Ծանոթություն**-Ընտրական հանձնաժողովների աշխատաժամերն են՝ 9.00-ից մինչև 18.00, հանգստյան օրերը՝ շաբաթ և կիրակի, եթե Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքով և սույն ժամանակացույցով այլ բան նախատեսված չէ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Ս.ՄԵԼՔՈՒՄՅԱՆ**